

ԴԻՍԿՈՒՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՌԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՇԱՐՔՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

1953 թ. հունվարի 22—23-ին Հայկական ՄՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական դիսկուսիա՝ հետևյալ թեմայով. «Ազգային-ազատագրական ու ռեյուցիոն շարժումները և բուրժուական-նացիոնալիստական հոսանքներն ու պարտիաները Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին»: Զեկուցեց ղոցենտ Վ. Ավետիսյանը: Զեկուցողը նշեց, որ 19-րդ դարի 60-ական թվականներին ժողովրդական մասսաների շահերի միակ պաշտպանը հայ իրականության մեջ եղել է ռեյուցիոն-գեմոկրատական հոսանքը, որը ռուս մեծ մտածող Գ. Զերնիշևսկու աշակերտ և գիտակից Մ. Նալբանդյանի գլխավորությամբ պայքար է մղել հայ բուրժուազիայի, ֆեոդալների ու կղերականության դեմ: Հայ ռեյուցիոն-գեմոկրատական հոսանքը, հակառակ բուրժուական լիբերալիզմի, հայ ժողովրդի ազատագրության հարցը կապում էր ռուս ժողովրդի ազատագրական պայքարի հետ:

19-րդ դարի 70—80-ական թվականներին էլ ավելի է ակտիվանում հայ ազգային շարժումը՝ կապված մասնավորապես 1877—1878 թ. թ. ռուս-թյուրքական պատերազմի հետ: Հայ բուրժուազիան և նրա իդեոլոգները՝ Արծրունին, Բաֆֆին, Պատկանյանը և ուրիշներ, հայկական հարցում եվրոպական պետությունների միջամտությունը արագացնելու նպատակով, առաջադրում են զինված հրոսակախմբերի միջոցով պայքար կազմակերպելու ծրագիր, որը պրոպագանդվում էր «Մշակ» թերթում, Բաֆֆու և Պատկանյանի ստեղծագործություններում: Այդ ծրագրի հողի վրա էլ ստեղծվում են մի շարք բուրժուա-նացիոնալիստական խմբակներ ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում:

Նացիոնալիստական այդ պրոպագանդային հակառակ ուժեղանում է ժողովրդական մասսաների ձգտումներն արտահայտող գեմոկրատական հոսանքի պայքարը լիբերալիզմի և այլ հակաժողովրդական հոսանքների դեմ:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում հայ ժողովրդի ազատագրական շարժման պատմության մեջ ակավում է նոր էտապ՝ կապված Ռուսաստանում բանվորական ռեյուցիոն շարժման ծավալման և բանվորական ինքնուրույն մարքսիստական պարտիայի ստեղծման հետ:

Անդրկովկասում ընկեր Ստալինի ղեկավարությամբ ստեղծվում են սոցիալ-գեմոկրատական կազմակերպություններ, որոնք գլխավորում են բանվոր-դասակարգի քաղաքական պայքարը ցարիզմի և բուրժուազիայի դեմ: Ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ լենինյան-իսկրայական սոցիալ-գեմոկրատական կազմակերպություններ են ստեղծվում նաև Հայաստանում: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի ղեկավարությունն իր ձեռքն է վերցնում մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը:

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաներն ու խմբերը պրոլետարիատի դասակարգային պայքարի թեորիային հակադրում են ազգի համերաշխության, ազգային-ազատագրական շարժման մեջ միասնական հոսանքի բուրժուական թեորիան, պայքար մղելով տարբեր ազգերի աշխատավորների համերաշխության դեմ, նրանք ձգտում են անջատել հայ պրոլետարիատին և գյուղացիությանը ռուս պրոլետարիատից և գյուղացիությունից, համառուսաստանյան ռեյուցիոն շարժումից և նրանց բախտը կապել արև-

մրտա-եվրոպական իմպերիալիստական շրջանների հետ:

Հայաստանի բուլժեկները, ընկեր Ստալինի և նրա մերձավորագույն գիտակիցներ Ստեփան Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, Անաստաս Միկոյանի ղեկավարությամբ, անողոր պայքար են ծավալում բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի և բուրժուական պարտիաների դեմ, բուրժուական նացիոնալիզմին հակադրելով պրոլետարական ինտերնացիոնալիզմը, բոլոր ազգերի աշխատավորների համերաշխությունը, ազգային միջնորմների ոչնչացումը: Բուլժեկները հայ ժողովրդի ազատագրական շարժումը կապում են ռուս պրոլետարիատի պայքարի հետ, պրոլետարական ռեյուցիոնալիզմի հետ, որը միայն կարող էր բերել և իրոք բերեց հայ ժողովրդին և Ռուսաստանի բոլոր մյուս ժողովուրդներին թե՛ սոցիալական և թե՛ ազգային ազատագրություն:

Այնուհետև զեկուցողը մանրամասնորեն կանգ առավ այն սխալների վրա, որ թույլ են տվել սովետահայ մի շարք պատմաբաններ, գրականագետներ, տնտեսագետներ և փիլիսոփաներ վերոհիշյալ հարցերի լուսաբանման գործում:

Այդ ընկերները հանդես են բերում անբնագատ վերաբերմունք զեպի բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը, առերթ են տալիս սմիասնական հոսանքի կոնցեպցիային: Մի շարք աշխատություններում 19-րդ դարի բոլոր հարցերը հանդեցվում են ազգային-ազատագրական շարժման, անտեսելով դասակարգային պայքարը, տարբեր հասարակական հոսանքների պայքարը, փորձեր են արվում իդեալականացնել ազգային շարժումները, կոծկել նրանց բուրժուական էությունը, բուրժուական լիբերալները ներկայացվում են որպես գեմոկրատներ: Զեկուցողը կանգ առավ պրոֆեսորներ Վ. Պարսամյանի, Վ. Ռշտունու, Մ. Ներսիսյանի, Ա. Տերտերյանի և ուրիշների թույլ տված սխալների վրա:

Ընկ. Ավետիսյանի զեկուցումը առաջացրեց մտքերի աշխույժ փոխանակություն: Քննարկվող հարցի շուրջը արտահայտվեցին ընկ. ընկ. Մ. Ներսիսյանը, Ա. Հակոբյանը, Վ. Պարսամյանը, Ռ. Հովհաննիսյանը, Մ. Մկրչյանը, Հ. Գասպարյանը, Վ. Ռշտունին, Գ. Սահակյանը, Բ. Օհանջանյանը, Վ. Ոսկանյանը, Ե. Խաչիյանը, Հ. Կարապետյանը, Մ. Ազյանը, Ար. Հովհաննիսյանը, Գ. Ստեփանյանը, Գ. Ղարիբջանյանը, Հ. Մամիկոնյանը և Մ. Արզումանյանը:

Ելույթ ունեցող ընկերները, արտահայտելով իրենց կարծիքները քննարկվող հարցերի շուրջը, բացահայտեցին հակադիտական, բուրժուա-նացիոնալիստական այն սխալները, որ տեղ են գտել առանձին գիտնականների աշխատություններում:

Պրոֆ. Մ. Ներսիսյանն բնորոնեց մամուլում և գիտությունում իր աշխատությունների վերաբերյալ եղած քննադատությունը: Նա ասաց, որ իր «Անդրկովկասի նարոդնիկական կազմակերպությունները 1870—1880 թ. թ.» գրքում (1940 թ.) և «Հայ ազգային ազատագրական շարժումը 1850—1880 թ. թ.» դիսերտացիոն աշխատությունում թույլ է տվել մեթոդոլոգիական քաղաքական լուրջ սխալներ, առերթ տարվով միասնական հոսանքի բուրժուա-նացիոնալիստական թեորիայի վնասակար կոնցեպցիային: Իր սխալներն ընդունեց նաև պրոֆ. Ար. Հովհաննիսյանը: Նա ասաց, որ «Պրավդա»-ում իր մասին եղած քննադատությունը միանգամայն ճիշտ է և տեղի ունեցրեց Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը 18-րդ դարի 80-ական թվականներին» աշխատության մեջ թույլ է տվել բուրժուա-նացիոնալիստական սխալ:

Գիտությունում իրենց ելույթներում պրոֆեսորներ Վ. Պարսամյանը և Վ. Ռշտունին, մի կողմից, հայտարարում էին, որ մամուլում և գիտությունում իրենց նկատմամբ եղած քննադատությունը ճիշտ է, որ իրենք թույլ են տվել բուրժուա-նացիոնալիստական սխալներ, իսկ մյուս կողմից, օրեկտիվ պատճառներ որոնելով, ամեն կերպ փորձում էին արդարացնել իրենց այդ սխալները:

Գիտությունի մասնադիցները իրավացիորեն քննադատեցին պրոֆ. պրոֆ. Վ. Պարսամյանի և Վ. Ռշտունու այդ վարքագիծը և հայտնեցին իրենց անբավականությունը նրանց ելույթներից: Միայն այդ բանից հետո նրանք վերջում հանդես եկան և հայտարարեցին, որ ընդունում են մամուլում ու գիտությունում իրենց աշխատությունների մասին եղած քննադատությունը, սակայն այդ հայտարարություններն էլ ցույց չտվին, թե նրանք լիովին բմրոնել և ընդունում են իրենց բոլոր սխալները:

Գիտությունում ելույթ ունեցողները քննադատեցին նաև ընկ. Հ. Մամիկոնյանին այն բանի համար, որ նրա խմբագրած Ա. Տերտերյանի «Սեպտուր Արովյան» գրքում տեղ են գտել «միասնական հոսանքի» թեորիայի դրսևորումները:

Գիտությունում քննադատության են թարկվեց Հայկական ՄՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիրը» (հասարակական գիտություններ): Նշվեց, որ «Տեղեկագրում» տպված հոդվածներից մի բանիսը պարունակում են գաղափարական լուրջ սխալներ: «Տեղեկագրի» խմբագրական կոլեգիան առանձնապես անբավարար է աշխատել վերջին ամիսների ընթացքում, չի կարողացել իր էջերում ծավալել կարծիքների ազատ փոխանակություն փիլիսոփայության, տնտեսագիտության, հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի և այլ բնագավառների հանդուցային հարցերի շուրջը: Գիտությունների ակադեմիայի նախագահությունը մոտիկից չի զբաղվել «Տեղեկագրի» հարցով, չի օգնել խմբագրական կոլեգիային՝ վերականոնելու իր աշխատանքները: Ակադեմիայի նախագահությունը և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոն իրավացի քննադատության ենթարկվեցին այն բանի համար, որ նրանք օպերատիվ ղեկավարություն ցույց չեն տվել հասարակական գիտությունների քննադավառի հիմնարկների աշխատանքին:

Գիտության ցույց տվեց, որ իդեոլոգիական բնագավառում տեղ գտած այս լուրջ թերությունները, գաղափարական սխալները արդյունք են աղաքին հերթին գիտության բնագավառում աշխատող մեր կադրերի մի մասի տեսական-գաղափարական ցածր մակարդակին, որի հետևանքով հաճախ նրանք չեն կարողանում հեշտ կողմնորոշվել գիտության մեջ, պատմական փաստերը քննության առնել մարքսիստական գիտությունից, առերթ են տալիս մարքսիզմին խորթ իդեոլոգիաներին, մասնավորապես լիբերալ պատմագրության կոնցեպցիաներին:

Գիտության քննադատի աշխատողների առաջնահերթ խնդիրն է՝ խորապես ուսումնասիրել մարքսիստական-լենինյան ուսմունքը, զինվել ներանով և ձեռնամուխ լինել գիտական լիարժեք աշխատություններ ստեղծելու պատվավոր գործին, սովետական առաջավոր գիտության մակարդակի վրա կանգնած աշխատություններ ստեղծելու գործին: